

տացին: Ս. Փիլիպպոս յաշոգուլթեամբ քարոզեց Աւետարանը Սամարիոյ շրջակայքը. Ս. Պետրոս և Ս. Յովհաննէս իրենց կողմէն Սամարիոյ այցելութիւն տայէ վերջ, «եւ ի բազում գեօղս Սամարացւոցն աւետարանէին» (Գործք Առաջ. Ը. 25): Միևնոյն թուականին քրիստոնէութիւնը մուտք գտաւ Նապլուսի մէջ, որ ծնունդ տուաւ Յուստինոսի՝ երկրորդ դարու քրիստոնէութեան մեծ ջատագովին: Դ. դարուն հոն հաստատուեցաւ եպիսկոպոսութեան մը աթոռը:

636ին Նապլուսը մտաւ Իսլամաց լուծին տակ. եւ 1100ին Խաչակիրք տիրեցին անոր. 1120ին հոն սինոդ մը գումարուեցաւ: 1184ին Սալահէտտին աւարառութեան տուաւ քաղաքը և 1187ին տիրացաւ անոր: 1202ին Նապլուս երկրաշարժէ մը քանդուեցաւ և միայն Սամարացիներուն թաղը ազատ մնաց:

Արգի ժամանակաց պատմութիւնը միշտ ըմբոստ կը ներկայացնէ Նապլուսի բնակչութիւնը Դամասկոսի և Աքքեայի կառավարիչներուն դէմ: 1834ին անոնք դարձեալ ըմբոստացան Իպրահիմ փաշայի դէմ: Վերջինս յանկարծ յարձակեցաւ Նապլուսի վրայ, թալանեց զայն և իր Շէյխը՝ Հասան Ահմէտը շղթայելով տարաւ Դամասկոս՝ ուր ան մահուան դատապարտուեցաւ իր չորս զաւակներուն հետ:

## 2. Խաչակրաց եկեղեցիները Նապլուսի մէջ.

Սալահէտտին երբ Նապլուսը գրաւեց, եկեղեցիներուն տիրացաւ և զանոնք վերածեց մզկիթի. նոյն գրաւուած եկեղեցիներն են.

### Ա. Ճամի Էն-Նապր

Այս եկեղեցիին Ճամի Էն-Նապր անունը տրուած է. և Clermont-Ganneau հրատարակեց անոր նկարագրութիւնը յատակագիծով: Բիւզանդական եկեղեցի մ'է սա, յատակագիծը կը պարունակէ ուղղանկիւն գերանամիջով յառաջացած կողակ մը, ուղղանկիւն թանձր պատերու մէջ հիւստուած երկու կողակիկներ, և նաւի հինգ գերանամէջեր խաչաթևերով, ամբողջ ցցանկիւններով կամարակապ: